ՆԻՆԵԼ ՍԱՐԳՍՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
ՀՏԴ 821.19.0

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՆ ՀԵՏՍԵՎԱԿՅԱՆ ՇՐՋԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Բանալի բառեր և բառակապակցություններ. առաջընթաց, համապատկեր, ավանդույթ, նորարարություն, կառույց, նրբերանգ, մոդել, բանաստեղծական աշխարհ, գեղագիտական հայացք:

Ключевые словаа и выражения: прогресс, панорама, традиция, новаторство, сооружение, тонкость, контур, модель, поэтический мир, эстетический взгляд,

Key words and expressions: evolution, innovation, construction, colours, borders, model, poetic world, estethic sight.

20-րդ դարի 60-ականներին գրականություն եկած բանաստեղծների սերունդը, որն իր մուտքն ազդարարեց համարձակ որոնումներով և գեղարվեստական մտքի թարմացման հավակնոտ ծրագրերով, անմիջապես իր վրա սևեռեց ինչպես գրաքննադատության, այնպես էլ ընթերցողների լայն շրջանակների ուշադրությունը:

Սկսած 1960-ականներից՝ սերնդի բանաստեղծների մասին գրվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնք արտահայտում էին իրարամերժ կարծիքներ, ծավալվեցին բուռն քննարկումներ ու բանավեճեր, որոնց մասնակցում էին տասնյակ գրողներ ու քննադատներ, ընթերցողներ:

Պ. Սևակը հույժ կարևորում էր, որ «երիտասարդությունը ազատագրվել է գրական նախապաշարումներից, որն այլ բան չէ, քան ժամանակավոր գերություն, իսկ սա գերության վատթարագույն տեսակն է: Մեր երիտասարդությունն ազատագրվել է սովորույթի ուժից, իսկ ես դա համարում եմ մեծագույն հաղթանակ»[1]:

Մեծ բանաստեղծը, խրախուսելով երիտասարդների համարձակ որոնումներն ու ինքնավստահությունը, միաժամանակ զգուշացնում էր հեռու մնալ մեծամտությունից. «Երիտասարդության ասածի ամենաբնորոշ հատկանիշը, թերևս, ինքնավստահությունն է, և սրա մեջ որևէ

[1] Սևակ Պ., Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 3, Եր. 2003, էջ 86:

պախարակելի բան չկա: Պախարակելին ու վտանգավորը սկսվում են կես քայլ հետո, երբ գալիս է հանճարացավը»[2]:

Իսկ հանճարացավով շատերն են տառապում. «Լավ, ինքնատիպ գնահատականները վիրավորում են այդ սերնդի որոշ ներկայացուցիչներին... Սրանք, սակայն, փոքր ու համեստ գնահատականներ չեն, եթե հրաժարվենք գրողների հասցեին գերադրական ածականներ շարադրելու մեր գավառական հիվանդությունից և հիշենք, որ մեծն Ներսեսը ընդամենը շնորհալի էր»:[3]

Սերնդի պոեզիան բուռն քննարկումների առարկա դարձավ 1983-ին «գրական թերթում» տպագրված Գ. Էմինի՝ Հ. Եդոյանի «Երկնային ժամանակ» գրքի մասին հոդվածից հետո: Բանավեճին մասնակցեցին անվանի ու երիտասարդ շատ գրողներ ու քննադատներ (Գ. Հայրյան, Հր. Թամրազյան, Ս. Աղաբաբյան, Կ. Դանիելյան, Ս. Սարինյան, Զ. Ավետիսյան, Ֆ. Մելոյան, Վ. Գասպարյան, Պ. Սևակ, Հ. Սահյան, Գ. Էմին, Վ. Դավթյան, Ռ. Հովսեփյան, Ն. Ադալյան և այլք):

Մասնակիցներից ոմանք արժևորում էին սերնդի ստեղծագործությունները, փորձում բացահայտել առաջընթացի միտումները, ոմանք ընդգծում էին սերնդի պոեզիայի «ապազգային բնույթը», իրական կյանքից կտրված լինելը:

Բանավեճին ակտիվորեն մասնակցում էին նաև սերնդի բանաստեղծները. «Մեր դաժան ժամանակները պահանջում են բանաստեղծության բոլորովին նոր բառակազմ: Երբ ժամանակները փոխվում են (թեկուզ աննկատ, բայց կտրուկ կերպով), ապա ժամանակին համընթաց պիտի փոխվի նաև բանաստեղծության բովանդակությունը»[4],- Գրում է Դ. Հովհաննեսը:

Հետաքրքիր դիտարկումներով էր հանդես գալիս Հ. Էդոյանը. «Կարելի է ասել, որ XX դարի գեղագիտական միտքը մի փորձ է հեռանալ մարդուց՝ որպես ինքն իրեն սպառած էությունից, թողնել նրա ձևերն ու հանգամանքները և հայացքն ուղղել դեպի մի տարածություն, ուր մարդը որպես շոշափելի, այսաշխարհային էակ, կոնկրետ գոյություն, այլևս չի հետաքրքրում իրեն և ձգտում է հասնել մի սահմանի, ուր նա բացակայում է,

[2] Նույն տեղում, էջ 228:

[3] Աղալյան Ն., Ժամանակը և բանաստեղծությունը, «Սովետական գրականություն», Եր., 1979, №2, էջ 148:

[4] Հովհաննես Դ.: Ազգի հայ քնարերգությունը, Եր., 2008, էջ 23

ուր ինքն արվեստն է», - գրում է բանաստեղծն ու բացում փակագծերը.[5] «Գրականությունը (արվեստն ընդհանրապես) ժամանակի ընթացքում փոխում է իր հագուստները, չի կարելի հին հագուստների հսկիչներ լինել. որքան էլ այդ հագուստները թանկ են մեզ համար ու սիրելի, միևնույնն է, մենք գերադասում ենք մեր մարմինները ծածկել նոր հագուստներով»:[6]

Սերնդի բանաստեղծական որոնումները բնութագրվում են որպես «յուրահատուկ հեղափոխություն մեր գեղարվեստական մտածողության մեջ[7]», «պոեզիայի այսօրը տեսնելու համար ժամանակից կառչելու փորձ[8]»: Հետաքրքիր և ուսանելի էին Հ. Սահյանի դիտարկումները: 1984թ. «Գարուն» ամսագրին տված հարցազրույցում նա արտահայտում է իր մտահոգությունները՝ անդրադառնալով սերնդի մի շարք բանաստեղծների, որոնք զուտ «արևմտամետ» հակումներ ունեին. «Նրանք ազատությունը դարձրին քմահաճության ու հեռացան հայրենական ավանդներից: Նրանք փախան իրենց կենսագրությունից, իրենց լեզվի զրնգուն համ ու հոտից խուսափեցին: Նրանք իրենց մանկությունից չեկան»[9]:

Պոեզիայի առաջընթացը ծավալվում էր հիմնականում երկու տարբեր ուղղություններով՝ այսպես կոչված նորարարական և ավանդական: ՛՛Ավանդապաշտ՛՛ չլինելու նպատակով շատերն իրենց ուշադրությունը հիմնականում սևեռում էին ՛՛արևմտամետ՛՛ բանաստեղծությունների ստեղծագործություններին, որոնք ՛՛աչքի էին ընկնում՛՛ «անցյալ դարի երկրորդ կեսի իրականության լայնածավալ ու դինամիկ վերարտադրմամբ», «բանաստեղծական խոսքի հերմետիզացմամբ, պատկերընկալման մետաֆորային համադրումներով, բառիմաստի ներքին դինամիզմով»[10]:

Նույն հեղինակը վերապահումով է արժևորում ավանդական թևի բանաստեղծների ստեղծագործությունները. «Անցյալ դարի 60-ական թվականներին ասպարեզ իջած բանաստեղծական սերնդի դիմագիծը ամբողջացնում են մի շարք անուններ ևս, որոնք, անկախ իրենց ստեղծած արժեքավոր գործերից, գրական ընդհանուր շարժման մեջ (մեծ հաշվով) չունեցան իրենց տարածաժամանակային դաշտը: Ա. Մարտիրոսյանի, Ա.

---

[5] Եդոյան Հ, Շարժում դեպի հավասարակշռության հոդվածներ, էսսեներ, Եր., 2009, էջ 15-16:

[6] Եդոյան Հ, Գրողը և ժամանակը, «Գարունը», 1999, №11-12, էջ 45:

[7] Սարինյան Ս; Հայ գրականության ելքավարը, 3, Եր; 2002, էջ 567

[8] Ավետիսյան Զ, Նորագույն գրականության զարգացման միտումները Եր; 2003, էջ 86:

[9] Սահյան Հ; Հարցազրույց, «Գարուն», 1984, №9, էջ 44-45

[10] Տե՛ս Մուսայելյան Հ; Սերնդի հայ բանաստեղծության գեղագիտական համակարգը Տե՛ս ատենախոսության սեղմագիրը, Եր; 2010, էջ 9,10:

Ավագյանի, Ս Կոսյանի, Վ Կոսյանի և այլոց գեղարվեստական ընկալումները ձևի և բովանդակության առումով մասնակիորեն մնացին ավանդույթի սահմանած տիրույթներում, գրական-մշակութային ակտիվ զարգացումներից հեռու՝ հավատարիմ իրենց դաժան ու փոքրիկ աշխարհի օրենքներին: Նրանց գրապատմական ակունքներում հայ դասական բանաստեղծությունն է՝ իր քնարական ու խոհափիլիսոփայական մասնակի դրսևորումներով, կառուցվածքային ու հոգևոր ներքին էներգիայի փոխանցման մեթոդներով ու սկզբունքներով:»[11]

Երիտասարդ գրականագետ Հ. Մուսայելյանի գրածը թերևս ճիշտ կարելի է համարել այն առումով, որ ՝՝ավանդապահներից՝՝ շատերն, իրոք, մնացին ՝՝ավանդույթի սահմանած տիրույթում՝՝ ՝ կրկնելով դասականներին ու մնալով նրանց համեստ աշակերտի կարգավիճակում: Պարզապես ավելի ճիշտ կլիներ հիշատակել նաև «արևմտամետներին», որոնք փորձում էին արհեստականորեն տեղայնացնել ամերիկյան ու եվրոպական բանաստեղծների փորձը:

Սերնդի տաղանդավոր բանաստեղծներից էր նաև Ա. Մարտիրոսյանը, ով, ի տարբերություն ընդգծված, «արևմտամետների» ու «ավանդապաշտների», կարողացավ հաջողությամբ համադրել հայ միջնադարյան ու դասական շրջանի և արևմտյան բանաստեղծության ավանդույթներն ու փորձը, և ստեղծել պոեզիայի տարածաժամանակային իր դաշտը, բանաստեղծության իր ինքնատիպ մոդելը:

Մամուլում, հատկապես «Գարուն» ամսագրում Ա. Մարտիրոսյանը տպագրվել է 60-ականների սկզբին, երբ մանկավարժական ինստիտուտի ուսանող էր: Դրանք այն տարիներն էին, երբ, ինչպես գրում է բանաստեղծը, իր և իր սերնդակիցների առջև փակ էին Հայաստանի միակ հրատարակչության դռները. Համառորեն գոց ... »[12]:

Ա. Մարտիրոսյանի առաջին ժողովածուն, որտեղ զետեղված են 60-ականներին գրված բանաստեղծությունները, լույս տեսավ 1973-ին («Բանաստեղծություններ»): Այդ կապակցությամբ նա գրում է. «Մինչ հիմա էլ տանը՝ իմ գրադարանում, պահում-պահպանում եմ սևակազմ մի գիրք, որը հրապարակածս գրքերից ամենասիրելին է ինձ համար. աշխարհի ոչ մի գրախանութում այն չի վաճառվել, ինձանից ու մի քանի մտերիմներիցս բացի ոչ ոք չգիտի նրա գոյության մասին, այնինչ անվանաթերթի վրա տպագրված է հրատարակչության անունը՝ «Հայաստան», 1967թ. ... : Իմ առաջին գիրքն է՝ «Խոնավ հեքիաթներ են աչքերը» վերնագրով, որը,

[11] Նույն տեղում, էջ 13:

[12] Մարտիրոսյան Ա; Բանաստեղծություն, Եր; 1973, էջ 26

հրատարակչական քաշքշուկից մազապուրծ փրկվելով, պահվեց գրադարանում: Բացվեց, բայց այնպես էլ լույս աշխարհ չեկավ... » [13]:

«Բանաստեղծություններ» ժողովածուն բացվում է «Հայաստան» բանաստեղծությամբ, որտեղ շարունակվում է մեր գրականության բաբախուն երակներից մեկը՝ լույսի պաշտամունքը.

Այս աշխարհի մեջ՝ դու իմ աշխարհը,
Այս աշխարհի մեջ՝ իմ հայրենիքը,
Առաստաղդ՝ լույս,
Եվ հատակդ՝ լույս
Եվ պատերիդ մեջ
Ճառագայթներ կան
Լույսի՜,
Լույսի՜,
Լույսի՜...[14]

Հայրենիքը բանաստեղծի մեջ է, նրա աչքերի մեջ է արթնանում բարի լույսի պես ու ճամփա ընկնում դեպի լեռները բարձրագնա, դեպի հովիտները արևկոտ, սարալանջերը արևկող՝ «արյան կարմիր գնդիկների պես շաղ տալով» բանաստեղծի երակներում, արյան կարմիր գնդիկների նման օրորվելով նրա մեջ.

Իմ երակներում դու շաղ ես տալիս
Իմ արյան կարմիր գնդիկների նման,
Եվ իմ արյան կարմիր գնդիկների նման
Օրորվում ես իմ մեջ,
Եվ քեզ համար եմ պարպում ձեռքերս,
Դու ինձանից դուրս իմ ժամանակն ես:
(«Բանաստեղծություններ», էջ 4)

Թեման շարունակվում է «Հայրենիքիս» բանաստեղծության մեջ.

Դու հող իմ, հաց իմ հանապազօր,
Երկինքներ՝ բացված սրտիս խորքում,
Քո ամեն, ամեն, ամեն հերկում
Արշալույսներ են բացվում բոսոր:
(«Բանաստեղծություններ», էջ 9)

Հայրենիքը բանաստեղծի համար ոչ թե աշխարհագրական հասկացություն է, այլ էություն, բարձրագույն ու անխուսափելի արժեք: Հայրենիք գաղափարի այսօրինակ ընկալումը հետագայում ավելի է

[13] Մարտիրոսյան Ա., Ներկայում հանգրվանող անցյալ, 2010, էջ 83
[14] Նույն տեղում, էջ 89:

խորանում Արմ. Մարտիրոսյանի բանաստեղծություններում, «Մազե կամուրջ» վեպում:

Արմ. Մարտիրոսյանի առաջին անաստեղծությունները լուրջ հայտ էին մեր պոեզիայի անդաստանում սեփական տարածքն ունենալու առումով: Բանաստեղծը գտնվում է որոնումների ճանապարհին, աշակերտում է դասականներին, ռուս և եվրոպական բանաստեղծներին, ճշգրտում է կողմնորոշման իր չափորոշիչները:

Գ. Նարեկացի, Ն. Քուչակ, միջնադարյան տաղերգուներ, որոնք «այսօր մեր նորօրյա գրականության մասնակիցներն են և նույնն են լինելու նաև հազար տարի հետո՝ երբևէ չխամրելով, ընդհակառակն, ինչպես ասում են՝ նորերի հետ նորանալով»:

Տարիների ընթացքում բանաստեղծի համար համոզմունք է դառնում, որ «պոեզիան Աստծո ընտրյալն է, հետևաբար՝ այնտեղ, ուր երկնային արքայությունն է, ոտք դնողը զուտ ոգեղենիկ է լինելու, մարմնական կշռից ու ցանկությունից ազատված»[15]:

Ստեղծագործական որոնումներն ուղեկցվում էին գրական «մաֆիայի դեմ պայքարելով՝ միայն տպագրվելու չնչին իրավունք ձեռք բերելու համար»: [16] Այստեղից էլ՝ որոշ բանաստեղծությունների մռայլ, թախծոտ, հաճախ՝ հուսահատական տրամադրությունները:

Ճախրող թռչունների թևերի տակ պահված
Սարդոստայններ կան.
Նրանք գործվել են
Իրար մոտեցնելու
Թռիչքի ու մահվան գաղափարը:
(«Բանաստեղծություններ», էջ 43)

«Սարդոստայնում» MA*GWհայտնված անհատը՝ իր բարդ հոգեբանությամբ, աշխարհընկալման իր կերպով, անցյալի-ներկայի-ապագայն վերաբերյալ իր փիլիսոփայական մոտեցումներով առանձնացող անհատն է, ում համար խիստ ցավալի է, որ նյութը կաղապարել է ամեն ինչ, մարդկությունը հեռացել է իր մանկությունից:

Նա ապրում է հիշողության «մթին քարանձավներում», ուր՝
Տանը՝ պատերից
Դեղին շրջանակներում կախվել են
Ծնողների դիմանկարները,

[15] Նույն տեղում, էջ 86:
[16] Նույն տեղում, էջ 83:

Եվ գրավել են նրանց անունները:
Ծնողները ապրում են դեղին շրջանակում,
Եվ իրենց հիշողության խորունկ քարանձավում
Պահում են երեխաներին:
(«Բանաստեղծություններ», էջ 69)

«Հիշողության լաբիրինթոսում» արավում են գալիք վայրկյանները, հիշողության մեջ արթնանում են կյանքի ապրված ու չապրված պահերը, և աշխարհը «լցվում է օրորոցներով»: Հիշողության «թռչող գորգերի» վրա թափվում են «դեղին, կարմիր» գույներով երիզված ժապավեններ, և հնչում է լինելության կոչը.

«Եղիր», - ասում են արևածաղկի մեղուները,
«Եղիր», - կրկնում են երեխաները,
Եվ աստվածներն ասում են՝
«Եղիր»:
(«Բանաստեղծություններ», էջ 66)

Բանաստեղծությունների մեջ գույները երևակվում են տարբեր երանգներով, դեղինն ու կարմիրը երիզվում են կապույտի նրբաթելերով: Երեխաները «մեկ-մեկ շոշափում են // Արցունքների անգունությունը և ասում են՝

Որ դրանք իրենց առաջին խանձարուրներն են
Եվ իրենց վերջին հագուստները,
Եվ արցունքների անգունությունը շոշափելիս՝
Նրանց մեջ ծնվում է
Գույնի զգացողությունը:
-Գույները (կարմիր, դեղին, կապույտ)
Նախապես նման են արցունքների...
(«Բանաստեղծություններ», էջ 71)

«Բանաստեղծությունները» ժողովածուում տեղ է գտել «Գնչուական մեղեդիներ» շարքը, որն աչքի է ընկնում հոգեբանական նրբին ներսուզումներով, հետաքրքիր պատկերամտածողությամբ.

Օջախի վրա այրվում է մութը,
Եվ խնկահոտ է ելնում վրանից:
Հետո՝
Բացվում է օրը:
Պազ երևում է
Այգաբացի դեմ շեփորահարող
Գնչուհու երգի ուրվանկարը:
Շեփորահարում են կապույտ երգերը
Կապույտ երկնքում:

Շեփորահարի կողքերին հոգնած
Գծագրվել են
Մի ամբողջ գիշեր մաշված կարոտի ոտնահետքերը:
(«Բանաստեղծություններ», էջ 80)

Բանաստեղծը վարպետորեն է ներկայացնում ժամանակը, տարածությունը, շարժումը: Պարում է գնչուհին: Երկար վարսերը գրկել են բարակ ու ձիգ մարմինը, այտերին՝ «ժպիտ է ու որդան կարմիր»:

-Էսմերալդա, քո պարի չափ խոնավ են աչքերդ,
Եվ երգերդ պիրկ են մարմնիդ չափ:

Անընդհատ շարժման մեջ է գնչուական թափորը, գնչուհու «բոբիկ ոտքերի կոշտուկները // Կապույտ տխրություն են քամում // Ճամփաների փոշուց // Ու նետում է երկինք՝ վրձինների տեսքով // Եվ քարավանը նետվում է երկինք՝ // Նկարելու կապույտ տխրությունը վերում:

«Բանաստեղծություններ» ժողովածուն արդեն վկայում է, որ Ար. Մարտիրոսյանը փորձում է թափանցել բառի ենթաշերտերը, բացահայտել նոր իմաստներ:

Ն. Սարգսյան

Արմեն Մարտիրոսյանի պոեզիան հետսևակյան շրջանի գրական զարգացումների համապատկերում

Ամփոփում

Հոդվածում համառոտ կերպով ներկայացվում են հետսևակյան շրջանի պոեզիայի առաջընթացի մտումները և այդ համապատկերում՝ 1960-ականների սերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկի՝ Արմեն Մարտիրոսյանի ստեղծագործության յուրահատկությունները: Մասնավորապես նշվում է, որ շարունակելով հայ միջնադարյան և նոր շրջանի գրականության ավանդույթները և դրանք հարստացնելով ռուս, եվրոպական ու ամերիկյան ժամանակակից բանաստեղծների փորձով, Արմեն Մարտիրոսյանն ստեղծեց բանաստեղծական մի ուրույն համակարգ՝ իր բովանդակային ու ձևակառուցվածքային յուրահատկություններով:

Н. Саргсян

Поэзия Армена Мартиросяна в понараме литературных развитий постсеваковского периода

Резюме

В статье кратко представляются тенденции прогресса поэзии постсеваковского периода и в этой панораме особенности произведения

Армена Мартирсояна, одного из талантливых представителей поколения 1960-ых. В частности, отмечается, что, продолжая традиции поэзии средневековья и нового периода и обогощая их опытом русских, американских и европейских поэтов, А. Мартиросян создал особую поэтическу систему со своими содержательными и морфоструктурными особенностями.

N. Sargsyan

Armen Martirosyan's poetic in everview of literary development postsevak's period.

Summary

In this article we show the evolution of postsevak's period development and in this overview we show the uniqueness of A. Martirosyan, one of the talanted representatives of 1960's.

Particularly mentioned that A. Martirosyan contuned Armenian poetic traditions of Middle and New ages and he also enriched it with Russian, American and Europian experience. He created his own system with uniqueness of content and style.